զընկզից ծառի ճղերն առէքն կոտրել էին վրայ
եւանելով, զի բաղումք կան յանտառնին եւ 165
յուժ սիրեն զընկուզն:

Եւ սուրբ Կարապետու կ'երեւէր լեռն Վա-
նայ եւ Բաղէշ եւ միւս կողմն Եփրատ գետ եւ
Մուշ քաղաքն օվայոմն· եւ կայ օվան իրեք
անվանի սքանչելագործ մեծ վանքեր· եւ են 170
հուպ եւ մերձ միմիանց իբրեւ կասկարայք·
մինն Մատնէվանք, ուր կայ Պետրոս առաքե-
լոյն մատն եւ այլ բաղում նշխարք, զոր եբեր
Սանցի տանուտէրն ի Հռոմայ եւ չինեաց ի
վրայ եկեղեցին եւ կոչեաց Մատնէվանք: Եր- 175
կրորդն՝ Սուրբ Աղբեր, ուր կայ շիշով պատ-
վական արիւնն Քրիստոսի, որ ի կողէն: Եւ
սուրբ Առաքեալն ստորոտ լերինն, ուր կան
Բեւեռքն Քրիստոսի, որ բեւեռեցաւ, այլ եւ
Գեղարդն եւ այլ մատն: Եւ այլ ի վայր են խո- 180
րու մօրիք եւ լերինք, որ են Սասունք:

Եւ իրեք օր կացի անդ, հասի ամենայն
վարդապետացս: Եւ էր անդ Տէր Մարտիրոս
անուն եպիսկոպոս մի եւ վարպետ, յոյժ
քաղցրեղանակ· զի յորժամ հանէր զձայնն՝ 185
համեղ նման Մամասայ, ոչ թէ միայն մար-
դիկ զմայլէին, այլ եւ թռչունք ժողովէին
մերձ առ նա: Զսայ յոյժ աղաչէին մնալ
յԱմիթ· եւ նա ոչ կամէր, զի ոչ խնդրէր
զվատս ի մարդկանէ, այլ առ ի Աստուծոյ: 190

164 զնկզից: — 167 լէռն: — 169 յօվայոմն: — 171 կասկայրաք: — 177 ի կողին: — 186 մարդիք: — 188 ոյժ: